«Ջեյմս Քեմերոն. Meet & Greet»

գովազդային վիճակախաղի մասնակցության պայմաններ

Կազմակերպիչ՝ «Դիննո» ՓԲԸ (Eventhub պրոդուկտ)

Գործընկեր՝ «Ամերիաբանկ» ՓԲԸ

Հիմնական պայմաններ

Գովազդային վիճակախաղի վերջնաժամկետ. 2026 թ. նոյեմբերի 8, ժամը 23:59-ը (Երևանի ժամանակով):

Մասնակցում են Միջոցառման տոմսերի վաճառքի մեկնարկից մինչև նշված վերջնաժամկետը կատարված համապատասխան գնումները, այդ թվում՝ արշավի հրապարակումից առաջ կատարված գնումները:

Մրցանակ՝ Միջոցառման երկու Meet & Greet տոմս երկու տարբեր հաղթողի, յուրաքանչյուրին՝ մեկ տոմս:

1. Ընդհանուր դրույթներ

- Սույն պայմանները սահմանում են «Դիննո» ՓԲԸ-ի (Eventhub պրոդուկտ, այսուհետ՝ Կազմակերպիչ) կողմից «Ամերիաբանկ» ՓԲԸ-ի (այսուհետ՝ Գործընկեր) հետ համագործակցությամբ կազմակերպվող գովազդային վիճակախաղին մասնակցության կարգը:
- Գովազդային վիճակախաղի նպատակն է խրախուսել «Ջեյմս Քեմերոն» միջոցառման (այսուհետ՝ Միջոցառում) տոմսերի գնումը MyAmeria հավելվածով MyEventhub բաժնից: Մասնակցության համար առանձին վճար չի գանձվում. գնորդը վճարում է միայն Միջոցառման տոմսի համար:
- Արշավի հրապարակումից առաջ կատարված գնումները նույնպես մասնակցում են գովազդային վիճակախաղին, եթե համապատասխանում են սույն պայմաններով սահմանված մյուս պահանջներին:

2. Մասնակիցներ և մասնակցության կոդեր

- Մասնակից կարող է լինել այն ֆիզիկական անձը, որը մինչև սահմանված վերջնաժամկետը MyAmeria հավելվածի MyEventhub բաժնից ձեռք է բերել Միջոցառման տոմս և վճարել է MyAmeria հավելվածի միջոցով: Գնումը պետք է լինի ամբողջությամբ վճարված, իսկ տոմսը՝ չվերադարձված: Այլ հարթակներով կամ վճարման այլ եղանակով կատարված գնումները մասնակցության իրավունք չեն տալիս:

- Յուրաքանչյուր համապատասխան տոմսի համար գնորդին տրամադրվում է առանձին մասնակցության մեկ կոդ: Եթե մեկ պատվերով ձեռք է բերվել մի քանի տոմս, տրամադրվում է նույնքան կոդ: Յուրաքանչյուր վավեր կոդ արդյունքների որոշման ժամանակ հաշվի է առնվում որպես առանձին հնարավորություն:
- Կազմակերպիչը մասնակցության կոդերը կուղարկի մինչև 2026 թ. նոյեմբերի 11-ը գնման պահին տրամադրված կապի միջոցով: Նույն հաղորդագրությամբ մասնակիցներին կհայտնվեն նաև գովազդային վիճակախաղի արդյունքների որոշման օրը, ժամը և վայրը:

3. Վերադարձ և անվավեր կոդեր

- Տոմսի վերադարձի, պատվերի չեղարկման կամ վճարման հետգանձման դեպքում տվյալ տոմսի համապատասխան մասնակցության կոդը անվավեր է ճանաչվում և չի մասնակցում գովազդային վիճակախաղին: Մասնակի վերադարձի դեպքում անվավեր են ճանաչվում միայն վերադարձված տոմսերին համապատասխան կոդերը:
- Եթե հաղթող կոդին համապատասխան տոմսը վերադարձվում է արդյունքների որոշումից հետո, հաղթողը կորցնում է այդ կոդով ստացված Meet & Greet տոմսի իրավունքը: Եթե մրցանակային տոմսն արդեն տրամադրվել է, այն նույնպես անվավեր է դառնում:

4. Մրցանակ

- Մրցանակային ֆոնդը բաղկացած է Միջոցառման 2 հատ Meet & Greet տոմսից: Պատահական ընտրությամբ որոշվում են երկու տարբեր հաղթողներ. նրանցից յուրաքանչյուրին տրամադրվում է մեկ տոմս՝ այս փաստաթղթում ներկայացված պայմաններով:
- Մրցանակը չի փոխանակվում դրամական գումարով կամ այլ մրցանակով: Հաղթողը պարտավոր է պահպանել Միջոցառման և Meet & Greet հանդիպման մուտքի կանոնները, որոնց մասին Կազմակերպիչը նրան տեղեկացնում է մրցանակը տրամադրելիս:

5. Արդյունքների որոշում

- Արդյունքների որոշմանը մասնակցում են սույն պայմաններով սահմանված ժամկետում կատարված համապատասխան գնումների բոլոր վավեր կոդերը՝ անկախ նրանից՝ գնումը կատարվել է արշավի հրապարակումից առաջ, թե հետո:
- Կազմակերպիչը պատահականության սկզբունքով ընտրում է երկու հաղթող կոդ տարբեր մասնակիցներից: Եթե երկրորդ ընտրված կոդը պատկանում է արդեն ընտրված հաղթողին կամ անվավեր է,

ընտրությունը կրկնվում է մինչև որոշվեն երկու տարբեր իրավասու հաղթողներ: Արդյունքների որոշման օրը, ժամը և վայրը մասնակիցներին հաղորդվում են մասնակցության կոդերի հետ:

6. Հաղթողի տեղեկացում և մրցանակի տրամադրում

- Կազմակերպիչը յուրաքանչյուր հաղթողի մասին տեղեկությունը ներկայացնում է իր ինստագրամյան պաշտոնական էջում, ինչպես նաև դրա մասին տեղեկացնում է հաղթողին՝ տոմսերի գնման ժամանակ ներկայացված էլ. հասցեին ուղարկելով Meet and Greet տոմսերը:
- Հաղթողի Meet & Greet տոմսն ուղարկվում է MyEventhub բաժնից համապատասխան Միջոցառման տոմսը գնելիս օգտագործված նույն էլեկտրոնային փոստի հասցեին:

7. Բացառություններ և այլ դրույթներ

- Եթե Միջոցառման կամ գովազդային վիճակախաղի անցկացման պայմանները փոխվում են Կազմակերպչից անկախ հանգամանքների կամ օրենքի պահանջի հետևանքով Կազմակերպիչը փոփոխությունների մասին տեղեկացնում է մասնակիցներին Eventhub-ի պաշտոնական ալիքներով՝ պահպանելով օրենքով պաշտպանվող իրավունքները:
- Կազմակերպիչը մասնակցի տվյալները մշակում է գովազդային վիճակախաղի կազմակերպման, մասնակցության հաշվառման, կոդերի ուղարկման, հաղթողների որոշման և մրցանակների տրամադրման նպատակներով՝ ՀՀ անձնական տվյալների պաշտպանության օրենսդրությանը համապատասխան: Սույն պայմանների նկատմամբ կիրառվում է ՀՀ օրենսդրությունը:

8. Կազմակերպչի տվյալներ

- Կազմակերպիչ՝ «Դիննո» ՓԲԸ (Eventhub պրոդուկտ)
- Գործընկեր՝ «Ամերիաբանկ» ՓԲԸ
- Մասնակցության հարթակ՝ MyAmeria հավելվածի MyEventhub բաժին
- Կապ՝ support@eventhub.am | eventhub.am | +37433820080